

Ն Ե Ր Ք Ի Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Խօսք և գործ.—Ցուցահանդէսի առիթով կայացած ժողովներ.—Իրաւարանական օգնութիւն ազգաբնակչութեան.—Պեղարուեստական դպրոցի նշանակութիւնը.—Քաղաքի առևտրական դպրոցը.—Մեր հասարակութեան քնքոյշ վերաբերմունքը դէպի կեղծ անանկները.—Հաղորդակցական միջոցների պակասութիւնը մեր երկրում.—Հեղուկ վառելիքի անմատչելիութիւնը մեր գաւառական գործարանների համար.—“Недѣля” շաբաթաթերթի խափանումը.—Բարձրագոյն բէսկրիպտ

Թէ Գիւղատնտեսական Ընկերութեան նախաձեռնութեամբ կայացած զանազան ճիւղերի ժողովները և թէ Բժշկական Ընկերութեան գումարած Կովկասի բժիշկների համաժողովը հնարաւորութիւն տուին ցուցահանդէսի առիթով Թիֆլիս եկած մեր երկրի զանազան մասնագէտներին հրապարակական քնննութեան ենթարկել մեր կուլտուրական կեանքի առաջադիմութեան համար շատ կարևոր խնդիրներ։ Անշուշտ թէ այդ կայացած և թէ կայանալի ժողովներում (մամուլի և անասնաբույժների) շօշափած բազմաթիւ հարցեր շատ առաջ արդէն արծարծուած են եղել և մեր Կովկասեան մամուլի մէջ ^{*)}, սակայն, այնուամենայնիւ, այդ հարցերի մասին գործնական կեանքին աւելի մօտ կանգնած մասնագէտների կարծիքները առանձին կարևորութիւն ունեն, որովհետև աւելի մեծ չափով են կրում ոչ միայն տեսական մտքի, այլ և սոսկ իրականութեան դասերը։ Այդ համաժողովներում կենդանի խօսքը, մտքերի փոխադարձ շփումից և տարբեր կարծիքների բաղխումներից, ինչպէս և կեանքից վերցրած փորձերի և դիտողութիւնների առատ նիւթերից՝ ստեղծուած է գործելու ծրագիրներ։ Անշուշտ այդ ծրագիրների վրայ ազդել է հասարակական այս կամ այն իդէալի կնիքը և հէնց դրա մէջ պէտք է տեսնել մամուլի կատարած դերը, բաւական է, օրինակ՝ յիշել այն նշանակութիւնը, որ տրուում էր կօօպերացիայ-

^{*)} Համեմատիր, ի միջի ալլոց, „Մշակ“, 1899 թ. № 184

ին, գեմատվոյին, մասսայի կրթութեան, ժողովրդի առողջապահական դրութեան, սակաւահողութեան եւայլն, համոզուելու համար որ խօսքը, հրապարակասօսական քարոզը, անհետեանք չէ անցել:

Ի հարկէ, այդ ժողովներումն էլ դեռ միայն խօսքեր, ցանկութիւններ էին լսոււմ, բայց չէ որ նախ հարկաւոր է որ ասուի այն բոլորը, ինչ կարելի է ասել այս կամ այն հարցի մասին, որ յետոյ միայն իրագործման մասին մտածուի: Գործը իբրև արդիւնք, ի հարկէ, աւելի կարեւոր է, սակայն առանց խօսքի նախապատրաստող դերի անկարելի է լուրջ և կեանքի պահանջներին համապատասխան գործունէութեան ծրագիր որոշել. իսկ անծրագիր, որոշ ուղղութիւնից զուրկ գործունէութիւնը միայն զուր տեղը ոյժեր և միջոցներ կարող է վատնել: Այլ բան է ցանկալ, որ մարդիկ հէնց միայն խօսելու պրօցէսին նշանակութիւն չը տան, այլ՝ ոչ պակաս եռանդով և իրագործման մասին հոգան:

Մի ժամանակ խօսքի ստադիայում էր նաև ժողովրդին իրաւաբանական օգնութիւն հասցնելու խնդիրը. մամուլը եւ ասանդով արծարծում էր այդ դադափարը, յենուելով արդարութեան, ժողովրդի ընդհանուր օգտի վրայ: Եւ այդ «քարոզը» ապարդիւն չանցաւ. վերացական, ալարուհիտական դադափարը համակրանք գտաւ նոյն իսկ այն դասակարգի մէջ, որի անձնական շահը կարծես հակառակ բան լինէր պահանջում. մայրաքաղաքների փաստաբանները իրանք իրանց բարի կամքով հիմնեցին իրաւաբանական խորհրդակցարաններ, ուր ձրի կամ չնչին վարձատրութեամբ տրոււմ էին չքաւորներին իրաւաբանական խորհուրդներ, գրւում էին դատաւարական թղթեր եւայլն: Ինչպէս հիւանդանոցը միջոց էր տալիս և՛ չքաւորներին օգտուել բժշկական գիտութեան բարիքներից, այնպէս էլ իրաւաբանական խորհրդակցարանները (կօնսուլտացիա) օրէնքի հովանաւորութիւնը դիւրացնում էին չքաւոր մարդկանց համար: Իսկ մինչև այդ չքաւորները կամ պէտք է ահագին նիւթական գոհաբերութիւններ անէին իրանց դատը պաշտպանելու համար կամ ստիպուած էին դիմել աւելի աժան նստող զանազան գրադիրների և «աբլակատների» խորհուրդներին, որոնք մեծ մասամբ գործին տալիս էին սխալ և կորստաբեր ուղղութիւն: Այդպէս ահա օրէնքի բարեբար պաշտպանութիւնը դառել էր սեփականութիւն միայն ունեւոր դասակարգի, իսկ չքաւոր անհատը, ինչպէս հիւանդութեան դէպքում բժշկական անխնամութեան շնորհիւ զոհ էր գնում հիւանդութիւններին, այնպէս էլ իրաւաբանական անօգնականութեան պատճառով զոհ էր դառ-

նում հասարակական կեանքի անարդարաբութեան և յաղթւում աւելի ունենորից, թէկուզ այդ վերջինը անարդար լինէր:

Այդ է պատճառը որ գաղափարի յաղթութիւն կարելի է համարել թիֆլիսի երդուեալ հաւատարմատարների և զբանց օգնականների ջանքերով մեր քաղաքում բացուած իրաւաբանական խորհրդակցարանը: Թող թիֆլիսի փաստաբանների այդ օրինակը վարակիչ լինի Անդրկովկասի և այլ քաղաքների իրաւաբանների համար. զբանով ինտելիգէնցիան կատարած կը լինի իր պարտականութիւններից գոնէ մէկը դէպի մասսան:

Խօսքից գործ է դառել և թիֆլիսում Գեղարուեստական դպրոց ունենալու ցանկութիւնը: «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ» Առանց գեղարուեստի մարդու կեանքը զրկուած է իր հրապոյրներից: Նոյն իսկ կենդանիներից մի քանիսը զուրկ չեն իրանց նիստ ու կացը զարգարելու ցանկութիւնից: Այդ գեղարուեստական պահանջից զուրկ չէ և վայրենին:

Մենք, կովկասցիներս, չենք կարող փայլել առանձին գեղարուեստական նրբութեամբ: Գեղեցկի զգացմունքը կամ ճաշակը շատ թույլ է զարգացած մասնաւոր հայերիս մէջ: Դրա մէջ համոզուելու համար բաւական է տեսնել մեր գիւղացիների որջերը, որ տուն են կոչւում, բաւական է տեսնել զօկ կանանց զլիսի աշտարակած և զարգարանքը...

Մեր ճաշակի գոհակութիւնը երևում է ոչ միայն մեր նիստ ու կացից, այլ և մեր արհեստաւորների, մեր տնայնագործների չէնքերից. ինքնուրոյն, նուրբ և առաջադիմող ճաշակ դուք չէք տեսնիլ այդտեղ, այլ կրկնութիւն հին ձեւերի կամ անտաշ, ստրկական նմանողութիւն եւրոպականի: Հետեաբար մի գեղարուեստական դպրոց կարող է նշանակութիւն ունենալ մեզ համար ոչ միայն մեր ժողովրդի հոգեկան կարողութիւնը ազնուացնելու, այլ և նրա տնտեսական աջողութեան տեսակէտից: Ուստի ցանկալի է որ թիֆլիսում բացուած Գեղարուեստական զբարոյը ձգտի կրթել մասսայի ճաշակը, զարգարել նրա կեանքը և զարկ տալ տնայնագործական և արհեստաւորական կերտուածների նրբաճաշակութեան:

Այլ նպատակ ունի Բազում բացուած Առևտրական զբարոյը: Առևտրի հին սիստեմն էր—խաբեքայութիւն և խորամանկութիւն: Իսկ կեղծ սնանկութիւնը, «տակով անելը» այժմ էլ մի քաջագործութիւն է համարւում մեր մէջ և ոչ ոք երեսը չուռ չի տալիս այդ տեսակի խոշոր գողերից:

Այնքան ըթացած է մեր մէջ բարոյական մասշտաբը, որ կեղծ սնանկներին միջոց էլ ենք տալիս փառաւոր ապրել տակով արած փողերով: Այնքան սոսկալի է այդ բարոյական անկումը,

որ կեղծ մանկի գործերը կարգի դնողները (ադմինիստրացիա) դեռ նախ և առաջ այդ գողերի համար փառաւոր ապրուստ ապահովելու մասին են հոգ տանում: Երեկուայ գեադան յանկարծ մանականում է մի քանի հարիւր հազարով: Բոլորը լաւ գիտեն, որ նա «տակով է արեւ», բայց դա անմեղ մի չարածճութիւն է համարւում և «ադմինիստրացիան» որոշում է որ, բացի թագ-ցրած գումարներից, այդ երեւելի «կոմերսանտը» ստանայ այն-քան էլ, որ կուրօրտներում կարողանայ վերականգնել իր թանկագին առողջութիւնը... Փոխարէն բանտ նստացնել, փոխարէն պատժել այդ աւազակներին դեռ հովանաւորում են. իսկ օրէն-քը Սիբիր է ուղարկում մի թշուառ գողի, որին գուցէ սովն է ստիպել ուրիշի սեփականութիւնից օգտուելու: Այն, շատ և շատ քնքոյշ ենք գէպի «կեղծ մանկները», դրանցից չեն խորշում և մեր «իդէալիստ» ինտելիգէնտներից շատերը...

Ահա այդ է մեր առևտրական աշխարհի մթնոլորտը, այդ է մեր կոմէրսանտների «սիստեմը»: Ինքն ըստ ինքեան պէտք է հասկանալի լինէր, որ այդ երանելի պայմանները չեն կարող ապահովել մեր առևտրականներին եւրոպականաձև կազմակերպուած նմանօրինակ ձեռնարկութիւնների մրցումից: Միայն ընդհանուր զարգացումը և գործնական գիտութիւնը կարող են մեր մէջ պատրաստել իսկական առևտրականներ և արդիւնագործներ: Որքան բարձր լինեն իրանց զարգացումով և մասնագիտական նախապատրաստութեամբ մեր առևտրականները, այնքան աւելի հեշտ կը լինի մտցնել մեր կեանքի մէջ աշխատանքի դրութիւնը բարւոքող վերանորոգութիւններ: Բնականաբար չի կարելի չը ցանկալ որ Անդրկովկասի այդ երկրորդ առևտրական դպրոցն էլ ծաղկի և տայ օրէցօր տնտեսապէս զարգացող մեր երկրին արժանաւոր գործիչներ:

Այդպիսի գործիչների կաբոթութիւնը աւելի ևս մեծ է դառնալու մեր երկրի հաղորդակցական միջոցների բարւոքումներից յետոյ: Այժմ մեր ճանապարհները դեռ շատ հեռու են նոյն իսկ կենտրոնական Ռուսաստանի հաղորդակցական դիւրութիւններից: Ստեֆենսօնի գիւտը 73 տարուց յետոյ դեռ միայն նոր նոր է մուտք գործում Արարատեան դաշտում. չոգեշարժի սու-լոցը դեռ չի հնչել «ջրհեղեղին վկայ» Երևանում... Այդ երկաթուղային երակը և նրա չարունակութիւնը անշուշտ մեզ աւելի սերտ է կապելու Ռուսաստանի միջոցով և համայն աշխարհի հետ: Նա առաջացնելու է մեր երկրում նիւթերի և գաղափարների աւելի արագ շրջանառութիւն: Արարատեան դաշտի ազգաբնակչութեան ոչ միայն տնտեսական, այլ և դասակարգային յարաբերութիւնները տակն ու վրայ են լինելու. նահապետական

կեանքը, բնական տնտեսութիւնը աւելի արագ քայլերով են վերանալու և եւրոպական քաղաքակրթութեան հզօր հոսանքը լուսաւոր և մութ կողմերով ողողելու են մեր երկիրը: Հայի ինքնուրոյնութիւնը ամենամեծ վտանգի է ենթարկուելու: Մըր-ցումը առետրական և արդիւնագործական ասպարէզներում աւելի է սաստկանալու մեր երկիրը խուժած եւրոպացիների շը-նորհիւ: Ահա այդ մրցման դէմ մեր առետրականների հին սիս-տեմը նոյնը կը լինէր, ինչ ազնւերով մարտը Կրուպպի թնգա-նօթիների դէմ:

Այն օրից, երբ հինաւուրց Մասիսի ստորոտում կ'երեայ հրաշունչ կաղըր—համաշխարհային կեանքի վիթխարի զարկը աւելի ուժգին կը թնդայ և հայի կեանքում, սաստկացնելով հնի և նորի մաքառումը: Ի հարկէ, երկաթուղու Երևանի ճիւղը բաւական չէ. մեր երկրի ամբողջութեան զարգացման համար շատ կարևոր են երկաթուղային ճիւղերի մի խիտ ցանց, իսկ մենք չունենք շատ տեղերում նոյն իսկ հասարակ խճուղիներ: Այդ-պէս, օրինակ, Եւլախից խճուղին գնում է հարաւ մինչև Կօրիս, դէնը կարծես մարդիկ չը լինեն ապրում իրանց հաղորդակ-ցական պահանջներով: Կօրիսը Հին-Նախիջևանի հետ միացնելու համար հարկաւոր էր շարունակել ևս 80 վերստ մինչև Բիչա-նագ: Այն ժամանակ ստիպուած չէին լինի Հին-Նախիջևանի գաւառի բնակիչները, օրինակ, Բագու, Մոսկուա գնալու համար, Կօրիս-Շուշի-Եւլախ կարճ ճանապարհը թողած, մի անգիրն պտոյտ անել Աղստաֆայի վրայով: Կամ բերենք մի այլ օրի-նակ: Յայտնի է թէ որքան աղքատ է մեր երկիրը անտառներով և վառելիքով. մինչդեռ Բագուի մագուտը իբրև շատ ձեռնտու հեղուկ-վառելիք կարող էր շարժել մեր գաւառների բոլոր գոր-ծարանների մեքենաները, եթէ ունենայինք կարգին ճանապարհ-ներ: Սակայն ներկայումս ինչպէս, դիցուք, Օրդուբադի մետաք-սագործարանատէրը բերել տայ Բագուից մագուտ, երբ միայն ճանապարհի քրէհ նա պէտք է տայ պուղին մի ուրիշ: Բնա-կանաբար նա գերադասում է գնել իր գիւղացիներից ծիրանի և այլ փայտ ու այրել թէ որքան ձեռնտու է հաղար ու մի նեղութիւններով մեծացրած պողի ծառերը կտրտել վառելիքի համար, այդ թողնում ենք վճել մեր այդեգործներին: Աւելի նպաստաւոր չէ Բագուից համեմատաբար մօտ գտնուող Նուխուայ մետաքսագործարանատիրոջ համար, պուղը 7 կոպէկ արժո-ղութիւն ունեցող մագուտը մինչև հասնի Նուխի, ճանապարհա-ծախսով դառնում է 40 կոպէկ, այն էլ եթէ անձրևային չէ ե-ղանակը, հակառակ դէպքում սալլապանը Եւլախից Նուխի կը վերցի պուգաւմար 30 կոպէկ:

Ահա ձեզ մի զուտ Տանտալոսի տանջանք. բազուկցիք չը գիտեն ում ծախեն իրանց ծովացած հեղուկ վառելիքը, իսկ մեր գաւառական բազմաթիւ գործարանները հեղուկ վառելիքի ծաւալից տոչորւում են: Եւ դեռ զարմանում ենք որ մեր նաւթը չի գնում արտասահման, չի մտնում կենտրոնական Ռուսաստանի գործարանները, երբ տեղային բնական այդ հարստութիւնը անմատչելի է նոյն իսկ մեր Անգրկովկասեան գաւառների արդիւնագործների համար: Եթէ ունենայինք կարգին հաղորդակցական պայմաններ, մեր «կրիզիսներից» շատերը երբէք չէին ունենայ այն ծայրայեղ սուր բնաւորութիւնը, որին ականատես ենք այժմ նաւթային կրիզիսի դէպքում:

ԼԵԻՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ, համաձայն գրաքննչական օրէնքի 131 յօդուածի, խափանուեց Պետերբուրգում լոյս տեսնող «Нодѣля» չաբաթաթերթը:

ՄԵԾ ԻԵՐԱՆ ՄԻԽԱՅԻԼ ՆԻԿՈԼԱԵՎԻՉԻ ԱՆՈՒՆՈՎ ՏՐՈԱԾ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՐԷՍԿՐԻՍՏՐ

Ձերդ Կայսերական Բարձրութիւն. Վրաստանը Ռուսաստանի հետ միացնելու դարևոր տարեգարծի տօնախմբութեան արժանայիշատակ օրը ես գոհութեամբ կանգ եմ առնում մեր անցեալի այս փառաւոր երեսի վրայ: Հարիւր տարի առաջ Վրաստանի թագաւոր Գէօրգի Իրակլիեվիչ զրեց իրան և իր երկիրը ի Տէր հանգուցեալ Կայսր Պաւլէ I-ի հովանաւորութեան և իշխանութեան տակ: Այդ կամաւոր հպատակութեամբ սկիզբ դրուեց Կայսրութեան հետ Վրաստանի անխզելի միացման և Ռուսական Պետութեան տարածման Կովկասեան լեռնաշղթայի միւս կողմը: Այն ժամանակից վրաց ժողովուրդը և մանաւանդ վրաց ազնուականութիւնը անփոփոխ ցոյց են տալիս հաւատարմութեան օրինակ Ռուսաց Թագաւորներին և իրանց նոր հայրենիքին:

Պատերազմների բոլոր դաշտերում, որտեղ անցեալ դարի ընթացքում մեր զօրքերը կուրծք առ կուրծք հանդիպում էին Ռուսաստանի բոլոր թշնամիներին, վրաց իշխանների, թաւադների և ազնաւորների սերունդները թափում էին իրանց արիւնը ռուսական զործի համար և իրանց արիական քաջութեամբ նպաստում էին ռուսական զէնքի աջողութեան: Քիչ չեն այն վրացական իշխանական և ազնուական անունները, որոնց պատմութիւնը մտցրել է ռուսական զօրքի անթառամ փառքով պսակ-

ուած զօրավարների ցանկը՝ այդպիսի անուններ յայտնի են և այն անձերի թւում, որոնք յարգանք են վաստակել ժամանակակիցների կողմից և բարի յիշատակ թողել յետնորդներին իրանց օգտաւէտ գործունէութեամբ քաղաքացիական վարչութեան մէջ:

Արդարացի կերպով ուշադրութեան անհելով վրաց ազնուականութեան մատուցած պետական ծառայութիւնները Ռուսաստանին, որոնք արժանացել են շատ անգամ իմ նախորդների ողորմած գնահատութեան, ես յայտնում եմ նրան իմ Կայսերական և Արքայական բարեհաճութիւնը: Այս բարեհաճութեան իբրև տեսանկի ապացոյց թող ծառայէ այն, որ ես իմ ներկայացուցիչ ընտրեցի ներկայ տօների ժամանակ Ձեր Կայսերական Բարձրութիւնը, Կայսերական Տան Աւագագոյն անդամին, որ կարողացել է իր երկարամեայ փառաւոր և բարեացակամ վարչութեան ժամանակ Կովկասեան երկրում ներշնչել նրա ազգաբնակչութեան մէջ անկեղծ սէր և անձնուիրութիւն դէպի ինքը:

Կամենալով նշանաւոր կացուցանել Վրաստանի Ռուսաստանի հետ միանալու հարիւրամեայ տարեդարձը մի քանի միջոցների ձեռնարկութեամբ, որոնք կարող են ապահովել վրաց ժողովրդի ստիպողական կարիքների գոհացումը, ես բարւոք համարեցի.

1) Հիմնել Վլադիկավկազում կադէտների կօրպուս և այս միջոցով աւելացնել ձրիավարման տեղերի թիւը, որոնք աըրւում են պետութեան՝ կադէտների կօրպուսների մէջ Թիֆլիսի և Քութայիսի նահանգների տոնմական ազնուականների որդիներին:

2) Իբրև նպաստ Թիֆլիսի և Քութայիսի նահանգների ազնուականներին՝ մատաղ սերունդի կրթութեան և դաստիարակութեան գործում, տալ իւրաքանչիւր տարի պետական գանձարանից քառասուն հազար ռուբլի երկու նահանգների համար, յանձնելով տեղական նահանգական ազնուականութեան ժողովներին՝ յայտնել իրանց ցանկութիւնը յիշեալ գումարի գործածութեան մասին և ներկայացնել իրանց մտադրութիւնները այս առարկայի վերաբերմամբ Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետին՝ ըստ ընդունուած կարգի նրանց ընթացք տալու համար:

3) Թիֆլիսի և Քութայիսի նահանգներում տոնմական ազնուականութեան պատկանած հողերը, որոնք Կառավարիչ Սենատին 1900 թուականի յունիսի 12-ին տուած Անուանական Հրամանագրով ազատուած են պետական հողային հարկից ներ-

կայ եռամսակի ընթացքում, սկսած 1901 թուից, ազատել և հետևեալ 1904—1906 եռամսակի ընթացքում յիշեալ հարկի վճարումից:

4) Տալ Թիֆլիսի նահանգական ազնուականութեան ժողովին իրաւունք կարգադրել Թիֆլիսի ազնուականութեան հողային բանկի զուտ արդիւնքների այն մասերը, որոնք համաձայն նրա կանոնադրութեան, յատկացոււմ են Թիֆլիսի նահանգի հողատէր և հողագործ ազգաբնակչութեան հասարակական կարիքները լրացնելու և տեղական ազնուականութեան համար գիւղատնտեսական դրամագլուխ կազմելու նպատակով՝ այն պայմանով, որ ժողովի որոշումները հասարակական կարիքների համար յատկացուող գումարների մասին ներկայացուեն կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետի հաստատութեանը:

5) Տալ նոյն ազնուականութեան, Թիֆլիսի ազնուականութեան հողային բանկի լիկվիդացիայից յետոյ մնացած գումարները բաժանելիս, համաձայն այն աղբիւրների, որոնցից նրանք ստացուած են, սեփականութեան իրաւունք այդ գումարների և այն մասի վրայ, որ բաժին կ'ընկնի ի Տէր հանգուցեալ Ալեքսանդր II Կայսրի հրամանով բանկին տուած դրամագլխին, և

6) Ներել արքունական պալատների հաշոււմ ցոյց տուած մինչև 1901 թուի յունուարի 1-ը գանձարանին հասանելիք այն տուրքերի և տուգանքների ապագոյիկները, որոնք վերացուած են՝ 1900 թուի յունիսի 12-ին Պետական Խորհրդի հաստատած կարծիքով, ջնջելով այդ ապագոյիկները և տուգանքները հաշիւներից:

Տալով մինիստրներին համապատասխան ցուցմունքներ իմ այդպիսի կամքը կատարելու համար, ես յանձնարարում եմ Ձեր Կայսերական Բարձրութեանը յայտարարել այդ բանի մասին Թիֆլիսի և Քուլթայիսի նահանգների ազնուականութեանը և Անդրկովկասեան երկրի ամբողջ ազգաբնակչութեանը:

Մնում եմ դէպի Ձեզ առ միշտ բարեհաճ

Իսկականի վրայ Նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով գրուած է՝

և ի սրտէ Ձեզ սիրող

ՆԻԿՈԼԱՅ:

Կօմպիւէն,

1901 թ. սեպտեմբերի 7.